Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Կողբավան
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 25-ի
Թիվ 02 –Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____Ս.Սերոբյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու __25.01.2017թ_____ թիվ _02-Ն__որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Փոփոխվել է՝ համայնքի ավագանու 25.02.2019 թ. թիվ 08-Ն որոշմամբ

Կողբավան համայնք - 2017թ.

Ներածություն

Համայնքի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կողբավան համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի աշխատակիցներին:

Շնորհակալություն ձեզ, զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Կողբավան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի աշխատակազմն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Սերոբ Սերոբյան

2.Համայնքի նկարագրություն

Ժողովրդագրություն

Կողբավանը գյուղ է Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 33 կմ արևմուտք, ծովի մակերևույթից 1175 մ բարձրության վրա: Այն տեղակայված է Ախուրյան գետի ձախ ափին, որով անցնում է Թուրքիայի հետ սահմանը և գտնվում է Թուրքիայի հետ սահմանամերձ Բագարան գյուղից մի քանի կիլոմետր հյուսիս-արևելք:

Կողբավան համայնքը հիմնադրվել է 1983 թվականին, Արմավիրի մարզում: Սահմանակից է Վանանդի, Արտամետի, Շենիկի, Բագարանի և Երվանդաշատ համայնքներին:

Մայրաքաղաքից գտնվում է 75 կմ, իսկ մարզկենտրոնից՝ 33 կմ հեռավորության վրա: Մակերեսը՝ 3050 հա է: Հարուստ է շինարարական քարերով, շլագով:

Համայնքում առկա է 31 տնային տնտեսություն 171 մարդ թվաքանակով: Կողբավանի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 148 մարդ, որի 51 տոկոսը կազմում են կանայք:

Միատարր չէ համայնքի բնակչության ազգային կազմը: Բնակիչների 75տոկոսը կազմում են եզդիները:

Համայնքում բավարար մակարդակի վրա չէ բնակչության սոցիալ-տնտեսական և կոմունալ պայմանները: Բացակայում է խմելու ջուր և գազաֆիկացիա ունենալու հնարավորությունը: Համայնքում չկա դպրոց, բուժկետ և մանկապարտեզ:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է և անասնապահությունը:

Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1984 թ.-ի սեպտեմբերի 26—ին դասվել է ՀԽՍՀ գյուղերի կարգին և կոչվել Կողբավան:

3. ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում խնդիրներն անհաշվելի են: Գյուղում ոչինչ չկա…

Այս փոքրիկ ու աշխարհից, քաղաքակրթությունից կտրված համայնքում բացակայում են կյանքի համար շատ անհրաժեշտ ու կարևոր ատրիբուտներ.

Գյուղում չկա խմելու ջուր. Այն բերվում է հարևան Երվանդաշատ համայնքից և այդ ծախսերը հոգում է գյուղապետարանը:

Գյուղում չկան ոչ դպրոց, ո՛չ մանկապարտեզ…

Դպրոցահասակ երեխաների՝ հարևան Վանանդ գյուղ, դպրոց հաճախելու հոգսը նույնպես հոգում է գյուղապետարանը:

Գյուղում չկա բուժամբուլատորիա, չկա անգամ մթերային խանութ..

Գյուղը զրկված է գազից…

Կողբավանը մարզկենտրոնից շատ հեռու չէ՝ 33 կմ, բայց կտրված է մարզկենտրոնից և հարևան համայնքներից հասարակական տրանսպորտի բացակայության պատճառով.

Առաջնահերթ խնդիր է համարվում գյուղը խմելու ջրով ապահովվելու հարցը.

h/h	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	98
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	52,4
2	Կանայք	89
	Այդ թվում կանայք կազմում են բնակչության %	47,6
3	Թոշակառուներ	2
4	Փախստականներ	-
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	1
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
7	Հաշմանդամներ	-
8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	6
9	Զոհվածների ընտանիքներ	
10	Աշխատունակ բնակչության թիվը	120
11	Աշխատանք ունեցողների թիվը	
12	Գործազուրկներ	-
13	Գրանցված ընտրողների թիվը	120
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	32

Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 1,5 հազ.քմ, 15 բազմաբնակարանանոց շենքեր, 1 տնակ:

Համայնքում կա բնակարանի 1 կարիքավոր ընտանիք:

Հողօգտագործումը

Համայնքում հողի սեփականաշնորհման գործընթաց չի իրականացվել.

h/h	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի հողային տարածքը	3050,0
2	Գյուղատնտեսության նշանակության հողեր	2987,7
3	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	39,6
4	էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	9,2
5	Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր	2,0
6	Հատուկ նշանակության հողեր	-
7	Ջրային տարածք	7,8
8	Բնակավայրի տարածք	7,8

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	2800,0	2311,5
2.	Գույքահարկ	185,0	103,5

3.	Տեղական տուրք		
4.	Տեղական վճար	5,0	5,0
5.	Հողի վարձակալության վճար	1600,0	907,7
6.	Գույքի վարձակալության վճար	200,0	200,0
7.	Ծառայությունների մատ. վճարներ		
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	3500,0	3500,0
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա	412,4	412,4
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	242,7	242,7
11.	Հողի օտարումից եկամուտ	-31,5	-31,5
Ընդամենը		**8945,1**	**7682,8**

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 45,9 %:

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	կատարող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	7761,7	7056,1
2	Հանգիստ,մշակույթ և կրոն	154,7	-
3	Սոցիալական պաշտպանություն		
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	8397,7	7440,1
5	Նախադպրոցական կրթություն		
6	Պահուստային ֆոնդ	150,0	-

7	Աղբահանում		
8	Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակ.		
9	Ֆոնդային բյուջե	247,2	205,5
11	Կապիտալ նորոգումների ծախսեր		
12	Շենքերի և շին. կառուցում		-
	Ընդամենը	8945,1	7645,6

Կողբավան համայնքում առկա օգտակար հանածոների /քար և շլագ/ արտադրանքի սպառման շուկաները հիմնականում Հայաստանում է:

Համայնքում զբոսաշրջության և տուրիզմի համար հետաքրքրություն ներկայացնող վայրեր չկան:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 6 մարդ:

:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

Կողբավան համայն քի տարածքում գալիք 5 տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել համայնքի և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ ծրագրերը՝

1. Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցում կամ խորքային հորերի տեղադրում
2. Փողոցային լուսավորության համակարգի կառուցում կամ հիմնանորոգում
3. Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում
4. Համայնքի կարիքների համար տրանսպորտային միջոցների ձեռք բերում

Ծրագրերը նախատեսվում են իրականացնել համայնքի կամ համայնքի և պետության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակն

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար :

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Կողբավան համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

ա/ Գազաֆիկացման բացակայություն

բ/ Խմելու ջրի և բացակայություն

Համայնքի բյուջեի սուղ հնարավորությունների և պետական աջակցության բացակայության պատճառով հնարավոր չէ լուծում տալ Կողբավան համայնքի համար հույժ կարևոր և համայնքի սոցիալ-տնտեսական կյանքը խոչընդոտող գերակա այդ խնդիրները

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան բացակայությունը: Համայնքապետարանի սակավ ֆինանսական միջոցները թույլ չեն տալիս այդ պակասը լրացնել՝ բացելով խմբակներ, կազմակերպելով դասընթացներ և էքսկուրսիաներ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին՝ դեռահասներին ու պատանիներին ծանոթացնելու հայրենի բնությանը,հայրենի երկրի գեղատեսիլ վայրերին ու պատմամշկութային հուշարձաններին:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանության վիճակը գտնվում է անմխիթար վիճակում դարձյալ բյուջեի սղության և համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Համապատասխան միջոցների առկայության դեպքում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը կարելի էր որոշակիորեն բարելավվել այդ միջոցների նպատակային ուղղվածության պարագայում՝ մասնավորապես դրանք ուղղելով դեպի ընտանիքներ՝ խրախուսելով ծնելիությունը, աջակցություն ցուցաբերելով մահացածների, հիվանդությունների դեպքում:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիա և տրանսպորտային միջոցներ, որոնք համայնքում չկան:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1.Համայնքի աշխարհագրական դիրքը/բնակլիմայական պայմանները/ 2.Զարգացած անասնապահությունը 3. Զարգացած հողագործությունը /խաղող, բանջարա-բոստանային կուլտուրաներ/ 4.Համայնքում գիշերային լուսավորության առկայություն, որը հեշտացնում է տեղաշարժը համայնում, ինչպես նաև նպաստում բնակիչների որոշակի աշխատանքների իրականացմանը	1.Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հողակտորների անմշակ լինելը 2. Սոցիալապես անապահով ընտանիքների առկայությունը 3.Համայնքում դպրոցի, մանկապարտեզի և բուժամբուլատորիայի բացակայությունը 4. Խմելու ջրի բացակայությունը 5.Համայնքում կաբելային ինտերնետ կապի բացակայությունը 6.Իրականացվող երիտասարդական ծրագրերի բացակայությունը 7. Մայրաքաղաքից և մարզկենտրոնից մեծ հեռավորության վրա գտնվելն ու կտրվածությունը՝ տրանսպորտային կապի բացակայության պատճառով
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**

1.Ջերմոցային տնտեսության զարգացում 2.Խաղողագործության, պտղաբուծության զարգացում 4.Անասնապահության զարգացում	1.Բնակլիմայական պայմանները՝ ա/ երաշտը բ/ ցրտահարությունը գ/ կարկտահարությունը 2.Բնակչության արտագաղթը